ՀՀ վերաքննիչ քրեական դատարանին

Բողոքաբեր՝

թիվ ՇԴ/0072/01/15 քրեական գործով տուժողի իրավահաջորդ՝
Անդրանիկ Պողոսյանի ներկայացուցիչներ՝
Արթուր Ալբերտի Սաքունց
Հասցե՝ ՀՀ, ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 59

Արայիկ Միքայելի Զալյան
Անձնագիր AN 0752224, տրված 18.12.2013թ, 066-ից
Արտոնագիր՝ 2015, տրված 28.11.2015թ.
Հասցե՝ ք. Վանաձոր Տիգրան մեծի 59

Պատճենը՝
ՀՀ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի
դատարանի դատավոր՝ Հ. Մովսիսյանին

ՎԵՐԱՔՆՆԻՉ ԲՈՂՈՔ

(ՀՀ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 23.08.2016թ. դատավճռի դեմ)

Նյութական և դատավարական իրավունքի խախտման հիմքով

ՀՀ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը, նախագահությամբ՝ դատավոր Հ.Մովսիսյանի դռնբաց դատական նիստում քննելով քրեական գործն ըստ մեղադրանքի՝ Վալերի Պերմյակովի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 5-րդ, 8-րդ կետերով, ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ, 4-րդ կետերով և ՀՀ քրեական օրենսգրքի 34-329-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանք կատարելու մեջ, նրա մեղավոր ճանաչեց ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 5-րդ, 8-րդ կետերով, ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ, 4-րդ կետերով և ՀՀ քրեական օրենսգրքի 34-329-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործությունների կատարման մեջ և դատապարտեց ցմահ ազատազրկման։

1.Գործի փաստական հանգամանքները և մեղադրանքի էությունը.

1.1. 2014թ. մայիսի 21-ին Վ. Պերմյակովը զորակոչվել է ՌԴ զինված ուժեր և ծառայության անցել Զաբայկալյան երկրամասի Պեսչանկա գյուղի մոտ տեղակայված թիվ 21250 զորամասում: Զորամաս մեկնելուց 4 օր անց իրեն այցելության եկած ընկերներին տեսակցելու նպատակով Վ. Պերմյակովը, հրամանատարության

թույլտվությունը չստանալով, ինքնակամ լքել է զորամասը, մի քանի ժամ անց ոգելից խմիչք օգտագործած վիճակում ներկայացել ծառայության վայր: Հիշատակված վարքագծից ելնելով, Պերմյակովն ուղարկվել է Չիտա քաղաքի թիվ 321 զինվորական հոսպիտալի հոգեբուժական բաժանմունք ստացիոնար հետազոտության, որի ավարտից հետո հետազոտողները հանգել են հետևության, որ Վ. Պերմյակովը չի համապատասխանում ՌԴ զինծառայողին ներկայացված պահանջներին և ախտորոշվել է անձի անցողիկ խանգարում, անկայուն տեսակով՝ նշվել է, որ հոգեբույժի խորհրդատվության կարիք ունի զինվորական ծառայության պիտանելիության կարգը որոշելու համար:

1.2. Չիտա քաղաքի թիվ 321 զինվորական հոսպիտալի հոգեբուժական բաժանմունքից դուրսգրման էպիկրիզում խորհրդատվություններ են տրվել հոգեբանի կողմից՝ բժշկի դինամիկ հսկողություն, բացառել ծառայությունը զենքով կարգագրերում և հոգեբույժի զննում մեկ ամսից:

1.3. Վալերի Պերմյակովը ընկերներին ու հարազատներին տեսակցելու նպատակով 8-10 անգամ ինքնակամ լքել է թիվ 21250 զորամասը:

1.4. 2014թ. նոյեմբերի 28-ին Վ. Պերմյակովին զինվորական ծառայության են ուղարկել ՀՀ ք. Գյումրիում տեղակայված ռուսական թիվ 102-րդ ռազմաբազայի 04436 զորամաս: Վ. Պերմյակովին ամրակցել են ԱԿՍ-74 տեսակի 1283689 համարի ինքնաձիգը՝ 689 համարի սվին դանակով:

1.5. Ըստ պաշտոնական վարկածի՝ 2015թ. հունվարի 12-ին ՀՀ Գյումրի քաղաքում տեղակայված ՌԴ 102-րդ ռազմաբազայի թիվ 04436 զորամասի տանկային գումարտակի 1-ին տանկային վաշտի ժամկետային զինծառայող Վալերի Պերմյակովը իրեն ամրակցված ԱԿՍ-74 տեսակի ինքնաձիգով, 5,45մմ տրամաչափի 60 փամփուշտով և 689 համարի սվին դանակով «Մալայա կրեպոստ» կոչվող տարածքում իրականացնելով պահակային ծառայություն, ժամը 02-ի սահմաններում ինքնակամ լքել է պահակակետը և հագուստներ, գումար հայթայթելու նպատակով շրջել է Գյումրի քաղաքում:

1.6. Ժամը 06-ի սահմաններում հասնելով Գյումրի քաղաքի Մյասնիկյան փողոցի 188-րդ հասցեի տան մոտ՝ զենքի գործադրմամբ ավազակային հարձակման եղանակով ուրիշի գույքը հափշտակելու դիտավորությամբ դարպասի բաց դռնակից մտել է բակ, մոտեցել տանը, սվին դանակով մուտքի դռան ապակին հանելու և ներսի կողմից փականի վրա մնացած բանալիով դուռը բացելու միջոցով ապօրինի մուտք է գործել նշված տուն, որտեղ իր մոտ եղած ԱԿՍ-74 տեսակի, ինքնաձիգից ուղիղ նշանառությամբ արձակած 28 կրակոցով տեղում սպանել է նույն տան բնակիչներ Աիդա Ավետիսյանին, Հասմիկ Ավետիսյանին, Սերյոժա Ավետիսյանին, Արմեն Ավետիսյանին, Արաքսյա Պողոսյանին և մանկահասակ Հասմիկ Ավետիսյանին, որից հետո մանկահասակ Սերյոժա Ավետիսյանին առանձին դաժանությամբ սպանելու դիտավորությամբ, այն է՝ ինքնաձիգին ամրացված սվին-դանակով հինգ հարված է հասցրել մոր գրկում անօգնական վիճակում գտնվող վեց ամսական Սերյոժա Ավետիսյանի մարմնի

կենսական կարևոր օրգանների՝ որոնց հետևանքով մանկահասակ Սերյոժա Ավետիսյանը հիվանդանոցում յոթ օր անց մահացել է:

1.7. Վալերի Պերմյակովը զենքի գործադրմամբ ավազակային հարձակման եղանակով ուրիշի գույքը հափշտակելու մտադրությունն ավարտին հասցնելու նպատակով, նույն տնից հափշտակելով 64.300 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ սպորտային գլխարկ, տաբատ, բաճկոն, մեկ զույգ կիսաճտքավոր կոշիկ, §NOKIA 302¦, §NOKIA 6300¦, §NOKIA 7260¦ տեսակի բջջային հեռախոսներ և 6000 ՀՀ դրամ կանխիկ գումար, դեպքի վայրից հեռացել է:

1.8. Այնուհետև, Վալերի Պերմյակովը, ՀՀ պետական սահմանն ապօրինի հատելու դիտավորությամբ, դուրս գալով Գյումրի քաղաքի վարչական տարածքի սահմաններից, հասել է ՀՀ-ում ՌԴ անվտանգության դաշնային ծառայության սահմանապահ վարչության թիվ 2012 սահմանապահ ջոկատի Բայանդուրի ուղեկալի սպասարկած ՀՀ պահպանվող պետական սահմանի հատված, չունենալով սահմանը հատելու իրավունք վերապահող սահմանված փաստաթղթեր, նույն օրը՝ ժամը 24-ի սահմաններում, փորձել է ապօրինի հատել ՀՀ պահպանվող պետական սահմանի Բայանդուրի 12-րդ ուղեկալի 1-ին տեղամասի հատվածը, սակայն իր կամքից անկախ հանգամանքներով հանցագործությունն ավարտին չի հասցրել, քանի որ 2015թ. հունվարի 13-ին՝ ժամը 00:12-ին, բռնվել է Բայանդուրի ուղեկալի ծառայողների կողմից:

1.9. 2015թ. հոկտեմբերի 21-ին նախաքննություն իրականացնող մարմնի կողմից տուժողի իրավահաջորդին և նրա ներկայացուցիչներին տեղեկացվել է, այն մասին, որ նախաքննությունը ավարտվել է և հնարավորություն է ընձեռվել ծանոթանալու քրեական գործի նյութերին:

1.10. Գործի նյութերին ծանոթանալու արդյունքում, ներկայացվել է միջնորդություններ՝ քննչական գործողություններ կատարելու և չպարզված մի շարք հանգամանքներ պարզելու համար: Վարույթն իրականացնող մարմնի կողմից սակայն, կայացվել է ներկայացված միջնորդությունը մերժելու մասին որոշում:

1.11. 13.07.2015թ. ՌԴ քննչական կոմիտեն իր վարույթում քննվող թիվ 14/00/0001-15 քրեական գործից անջատում է ՌԴ քրեական օրենսգրքի՝ 105-րդ (սպանությունը) հոդվածով հարուցված գործի մասը և թիվ 14/00/0018-15 քրեական գործը Վալերի Պերմյակովի նկատմամբ նրա կողմից, ՀՀ տարածքում երկու և ավելի անձանց՝ ՀՀ քաղաքացիներ Ա.Ս. Ավետիսյանի, Ս.Կ.Ավետիսյանի, Հ.Ռ.Ավետիսյանի, Ա.Ս.Ավետիսյանի, Ա.Ա.Պողոսյանի, ինչպես նաև մանկահասակ Հ.Ա.Ավետիսյանի և Ս.Ա. Ավետիսյանի սպանությունը կատարելու փաստով քրեական պատասխանատվության ենթարկելու համար, ուղարկում է ՀՀ քննչական կոմիտե:

1.12. 18.07.2015թ. ՀՀ քննչական կոմիտեի քննիչ Գ. Աղաբաբյանի կողմից կայացվել է որոշում նախորդ կետում նշված թիվ 14/00/0018-15 քրեական գործը վարույթ ընդունելու և սույն գանգատի 10-րդ կետում նշված թիվ 18100115 քրեական գործին միացնելու մասին:

1.13. ՌԴ քննչական կոմիտեի կողմից չի փոխանցվել ՀՀ քննչական կոմիտե քրեական գործի նյութերի այն մասը, որը վերաբերվում է Վ. Պերմյակովի կողմից

զորամասը զենքով ինքնակամ լքելու փաստին, այն մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է ՌԴ 5-րդ կայազորային զինվորական դատարան, որի քննության արդյունքում 12.08.2015թ. Վ. Պերմյակովը դատապարտվել է 10 տարի ազատազրկման: Սույն կետում նշված գործով տուժողի իրավահաջորդները մասնակից չեն դարձվել քրեական գործի քննությանը, սակայան զորամասը ինքնակամ լքելը և Ավետիսյանների ընտանիքի սպանությունը պատճառահետևանքային կապով կապված են միմյանց հետ:

1.14. 16.10.2015թ. ՀՀ քննչական կոմիտեն գրությամբ դիմել է ՀՀ-ում տեղակայված ՌԴ 102-րդ ռազմաբազայի 04436 զորամասի հրամանատարությանը, որով խնդրել է ծառայողական քննություն կատարել այն հանգամանքների ուղղությամբ, որ Վ. Պերմյակովի կողմից ծառայության վայրը ինքնակամ լքելու հանգամանքը հայտնաբերվել է 2015թ. հունվարի լույս 12-ի գիշերը ժամը 03:20-ի սահմաններում, և դրանից շուրջ 3 ժամ անց նոր միայն կատարվածի մասին տեղեկացվել է ՀՀ ոստիկանությանը, որպեսզի պայմաններում չեն ձեռնարկվել անհրաժեշտ բոլոր միջոցառումները Վ. Պերմյակովին հայտնաբերելու նպատակով: Վ. Պերմյակովը ծառայության վայրը ինքնակամ լքել է 12.01.2015թ. ժամը 02-ի սահմաններում, ժամը 06-ի սահմաններում հասել է Ավետիսյաններին պատկանող բնակարան, որտեղել տեղի է ունեցել սպանությունը, ՌԴ 102-րդ զորամասի հրամանատարությունը ՀՀ իրավապահներին հայտնել է փախուստի մասին ժամը 06:00-ի սահմաններում, այն ժամանակ, երբ արդեն իսկ կատարվել էր սպանությունը: Վկայակոչված փաստի վերաբերյալ տուժողի իրավահաջորդը տեղեկացել է նախաքննության ավարտից հետո, գործի նյութերին ծանոթանալու արդյունքում և մինչև օրս որևիցե տեղեկություն չունի իրականացված ծառայողական քննության մասին:

1.15. ՀՀ քննչական կոմիտեում 19.11.2015թ. կազմվել է մեղադրական եզրակացություն ըստ մեղադրանքի՝ Վալերի Պերմյակովի ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ (սպանությունը) հոդվածի 2-րդ մասի 1-ին, 5-րդ, 8-րդ կետերով, 175-րդ (ավազակությունը) հոդվածի 2-րդ մասի 3-րդ, 4-րդ կետերով և 34-329 (պետական սահմանն ապօրինի հատելը, որը հանցավորի կամքից անկախ չի հասել իր ավարտին) հոդվածի 1-ին մասով և ուղարկվել է Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարան:

27. 25.11.2015թ. ՀՀ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Հ. Մովսիսյանի կողմից նախորդ կետում նշված մեղադրանքով գործն ընդունվել է վարույթ: Դատարանի 09.12.2016թ. որոշմամբ նշանակել է դատաքննություն և որոշել իրականացնել արտագնա դատական նիստ՝ ՌԴ 102-րդ ռազմաբազայի թիվ 04436 զորամասում 01.05.2016թ. դրությամբ գումարվել է 12 դատական նիստ:

1.16. 2016թ.օգոստոսի 23-ին ՀՀ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը, Վալերի Պերմյակովին մեղավոր ճանաչեց ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 5-րդ, 8-րդ կետերով, ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ, 4-րդ կետերով և ՀՀ քրեական օրենսգրքի 34-329-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործությունների կատարման մեջ և դատապարտեց ցմահ ազատազրկման:

2. Վերաքննիչ բողոքի իրավական հիմնավորումը և պահանջը.

Դատարանը խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածը, որի համաձայն՝ հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը պարտավոր են իրենց իրավասության սահմաններում քրեական գործ հարուցել հանցագործության հատկանիշներ հայտնաբերելու յուրաքանչյուր դեպքում, օրենքով նախատեսված բոլոր միջոցառումները ձեռնարկել հանցագործություն կատարած անձանց և հանցագործության, ինչպես նաև դրա կատարման հանգամանքները բացահայտելու համար:

2.1. Ավետիսյանների ընտանիքի 7 անդամների կյանքի նկատմամբ վտանգը կանխելու պարտականությունն անառարկելիորեն հանդիսացել է Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության պոզիտիվ պարտականությունը: (Տես՝ եվրոպական դատարանի *Tanrıbilir v. Turkey*, No. 21422/93, § 70, 16 November 2000, *Keenan v. the UK*, No. 27229/95, §§ 88-89, *Servet Gunduz v. Turkey*, No. 4611/05, 11 January 2011, § 63):

Այս պարտականությունն անխուսափելիորեն վերաբերում է նաև պարտադիր ժամկետային զինծառայողների կյանքի նկատմամբ վտանգն արդյունավետորեն կանխելուն ուղղված օրենսդրական միջոցառումներ և վարչարարություն ապահովելու պետության պարտականությանը (տես՝ *Ramon Alvarez v. Spain* (dec.), No. 51192/99, July 3, 2001, *Oneryıldız v. Turkey* [GC], No. 48939/99, § 89):

Այդպիսի կանոնների կիրառման ու վարչարարության իրականացման նպատակով անհրաժեշտ է գործուն միջոցներ ձեռնարկել զինակոչիկներին զինվորական ծառայության այնպիսի բարդություններից, բացթողումներից, սխալներից և վտանգներից զերծ պահելու համար, ինչպիսիք կարող են վտանգել նրանց և այլ անձանց կյանքը (տես՝ *Servet Gunduz v. Turkey*, No. 4611/05, 11 January 2011, § 65):

2.2. Ռուսաստանի Դաշնությունը մինչ Վ. Պերմյակովին՝ ՀՀ Գյումրի քաղաքում տեղակայված ՌԴ ռազմաբազայում ծառայության ուղարկելը քաջատեղյակ է եղել, որ Վ. Պերմյակովը անբարեխղճորեն է կատարել իր պարտականությունները և ունի հոգեկան առողջության հետ կապված որոշ խնդիրներ:

Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության կողմից խախտվել է Ա. Պողոսյանի և նրա ընտանիքի անդամների կյանքի նկատմամբ վտանգի կանխման պարտականությունը, քանի որ ՌԴ զինված ուժեր Վ. Պերմյակովին զորակոչելու պահից ի վեր ՌԴ ներկայացուցիչները տեղեկացված են եղել նրա ունեցած հիվանդությունների և դրանց բնույթի մասին և դրա վերաբերյալ հայտնել են իրենց բացատրություններում իսկ ՀՀ կողմից ՌԴ ռազմաբազայի նկատամամբ վերահսկողության բացակայությունը իսկզբանե հանգեցնում է Հայաստանի Հանրապետությունում կյանքի նկատմամբ վտանգի կանխման մեխանիզմի բացակայության: Մասնավորապես, որ Վ. Պերմյակովը տառապել է «անձի անցողիկ խանգարում հիվանդությամբ, անկայուն տեսակով» միևնույն ժամանակ

հոգեբույժները բացառել են նրա զենքով ծառայությունը, որի վերաբերյալ համապատասխան տեղեկություն է ունեցել զորամասը, որում նա ծառայել է, սակայն որևէ գործուն մոտեցում չի ցուցաբերվել Վ.Պերմյակովի նկատմամբ այլ հակառակը նրան վստահվել է մարտական զենք և պատշաճ հսկողություն չի իրականացվել նրա ծառայության նկատմամբ:

ՌԴ ռազմաբազայի ներկայացուցիչները Վ.Պերմյակովի ծառայության վայրը ինքնակամ լքելու փաստի առթիվ շուրջ 4 ժամ ուշ են հայտնել ՀՀ իրավապահներին, որն էլ իր հերթին անհնարին է դարձրել Ա. Պողոսյանի 7 հոգուց բաղկացած ընտանիքի սպանության կանխումը և զորամասը մարտական զենքով լքած Վ. Պերմյակովին ավելի շուտ հայտնաբերելը: Ավելին, ըստ գործի նյութերի Վ. Պերմյակովը ծառայության վայրը ինքնակամ լքել է 12.01.2015թ. ժամը 02:00-ի սահմաններում, Ավետիսյանների տուն հասել է ժամը 06:00-ի սահմաններում, որին էլ հաջորդել է ընտանիքի 7 անդամների սպանությունը:

Փաստ է, որ Ավետիսյանների ընտանիքի 7 անդամների սպանության պատճառը կայանում է նրանում, որ արդեն իսկ հայտնի պատճառներով, Վ. Պերմյակովը առհասարակ չէր կարող զորակոչվել և անցնել ծառայության ՀՀ տեղակայված ՌԴ 102-րդ ռազմաբազայում շարային ծառայության պարտականությունների ծանրության պայմաններում՝ մասնավորապես զենք կրել և վերակարգ կանգնել մարտական զենքով:

Սույն փաստերի լույսի ներքո կարող ենք պնդել, որ ոչ ՌԴ և ոչ էլ ՀՀ չի կատարել Ա. Պողոսյանի և նրա ընտանիքի անդամների կյանքի նկատմամբ ակնհայտ վտանգը կանխարգելելու իր պոզիտիվ պարտականությունը:

2.3. Քննությունը չի եղել ամբողջական.

2.3.1. ՀՀ չի ապահովել Ա. Պողոսյանի և նրա ընտանիքի անդամների մահվան փաստի ամբողջական քննությունը, քանի որ սպառիչ բացատրություններ չեն տրվել առ այն, թե ինչպես էր հնարավոր առանց շարժառիթի Ավետիսյանների ընտանիքի 7 անդամների սպանությունը, ընդ որում նրանց մեջ էին նաև մանկահասակ 2 երեխաներ, ԱԿՍ տեսակի ինքնաձիգի գործադրման արդյունքում հարևանների կամ այլ անձանց ձայների չլսելու հանգամանքը կամ Վ. Պերմյակովին մոտ 3 ԿՄ զենքով և զինվորական հագուստով քաղաքով քայլելու արդյունքում նրան չտեսնելու և Գյումրի քաղաքի տվյալ հատվածներում առկա և գործող խանութների կամ այլ հիմնարկների տեսանկարահանող սարքերով չֆիքսվելու կամ Վ. Պերմյակովի ներքնաշորերին հայտնաբերված անհայտ անձի արյան պատկանելիությունը չպարզելու և Վ. Պերմյակովի կողմից կատարված ոճրագործությունը գործելուց ժամեր առաջ բանկային հաշիվները ստուգելու պատճառների և հետագայում տվյալ հաշիվներին գումար փոխանցելու հանգամանքները չճշտելը:

2.3.2. Բացի այդ, Վ. Պերմյակովին ապօրինի զորակոչի, զենքով ծառայություն իրականացնելու, ՀՀ տեղակայված ՌԴ 102-րդ ռազմաբազա ապօրինի ծառայության

ուղարկելու, զինվորական ծառայությունը մարտական զենքով թողնելու մասին ՌԴ-ի ներկայացուցիչների կողմից ՀՀ իրավապահներին շուրջ 3 ժամ ուշ տեղեկացնելու հանգամանքների վերաբերյալ որևէ պաշտոնատար անձ պատասխանատվության չի ենթարկվել: Այլ խոսքով, պետության կողմից սույն գործով քննությունը եղել է ակնհայտորեն անարդյունավետ (Տես հավելվածներ 3, 16, 17):

2.3.3 Չփարատված են մնացել մի շարք հարցեր, որոնց վերաբերյալ ոչ նախաքննության և ոչ դատաքննության ընթացքում քննություն չի կատարել, մասնավորապես.

Ա. ՌԴ քննչական կոմիտեի կողմից ՀՀ քննչական կոմիտե փոխանցված քրեական գործի նյութերի ծանոթացման արդյունքում պարզ դարձավ, որ կատարվել է Վ. Պերմյակովի կողմից օգտագործվող օդնոկլասնիկի սոցիալական ցանցի վերծանում, ըստ որի 12.01.2015թ. ժամը 13:21:00-ին օդնոկլասնիկի կայքի օգտատեր Յուլենկա Անդրեենան հարցնում է Պերմյակովին. «Ինչ է պատահել Վալերա, ինչու է մաման ասում, որ ուզում ես փախչել»: Նշված հարցի վերաբերյալ քննությամբ չի պարզվել, թե Յուլենկա Անդրեենան ով է և ինչ ի նկատի ուներ նման հարց տալով:

Բ. 11.01.2015թ. ժամը 11:20:35 Վ. Պերմյակովի կողմից օգտագործվող նույն կայքէջից Լյուդմիլա Պոգիբելսկայա (Պերմյակովա) էջին ուղարկվել է հաղորդագրություն հետևյալ բովանդակությամբ՝ «Ողջույնիկ, ստուգիր հաշվեկշիռը զանգիր բանկ անվճար է 88007003800… քարտի համարը 5543860040668360 մուտքաբառը 12900666»: Այս նամակին ի պատասխան 11.01.2015թ. ժամը 12:57:29 ստացվում է հետևյալ պատասխան նամակը՝ «օքեյ, կստուգեմ կգրեմ… », այնուհետև 11.01.2015թ. ժամը 13:04:31 ստացվել է ևս մեկ հաղորդագրություն հետևյալ բովանդակությամբ «26 ռուբլի 17 կոպեկ»: Սույն գործի շրջանակներում առկա չէ Ավետիսյանների ընտանիքի 7 անդամների Վ. Պերմյակովի կողմից կատարված սպանության շարժառիթը: Վ. Պերմյակովին պատկանող բանկային քարտի համարին 5543860040668360, փոխանցումներ կատարված լինելու հանգամանքը ճշտելու արդյունքում կարող էր բացահայտվեր նաև սպանության հնարավոր շարժառիթը կամ սպանության հնարավոր «պատվիրատուն»:

Գ. 15.01.2015թ. «Օդնոկլասնիկի» կայքէջի օգտատեր՝ «Ալեքսեյ Նիկոլայեվիչ» գրում է Վ. Պերմյակովին՝ «Շնորհակալություն (սպասիբա) այնուհետև 17.01.2015թ. ժամը 17:58:16-ին Վիկտոր Ցիգանովն է գրում Վ. Պերմյակովին «Հիանալի է Վալերյա»: 14.01.2015թ. «Վ. Կանտակտե» կայք էջի օգտատեր «Կյանքում սրան» գրում է Պերմյակովին, «ապրես դու, պատասխանում եմ դու ուղղակի խելք ես, հետո, եթե կարողանաս դուրս գաս, ես ուրախ կլինեմ», այնուհետև 15.01.2015թ. նույն կայքի օգտատեր Անդրեյ Գոլուբևը «Վ. Կանտակտե» կայքով գրում է, «քեզ ամենայն բարիք քաղաքավարի մարդ», 12.01.2015թ. նույն սոցիալական ցանցով «Անդրեյ Հարությունյանը» գրում է «…. Ախպերս փախի, դու հետախուզման մեջ ես»:

Քրեական գործի քննության ընթացքում նման բովանդակությամբ նամակների վերաբերյալ քննություն չի իրականացվել, պարզելու համար օգտատերերը ովքեր են և ինչ պատճառով են նման բովանդակությամբ հաղորդագրություն գրել Վ.Պերմյակովին և նրանց հնարավոր մասնակցությունը Ավետիսյանների ընտանիքի անդամների սպանության գործով:

Դ. «Վ. Կանտակտե» կայքի զննությամբ պարզվում է, որ վերջին այցելությունը Վ. Պերմյակովին պատկանող կայքէջ եղել է 26.01.2015թ. 17:16-ին այն դեպքում, երբ Վ. Պերմյակովը 13.01.2015թ. արդեն ձերբակալվել էր և նրա նկատմամբ խափանման միջոց էր ընտրված կալանավորումը:

Վկայակոչված փաստի կապակցությամբ վարույթն իրականացնող մարմնի կողմից քննություն չի կատարվել պարզելու համար, թե ում կողմից է օգտագործվել Պերմյակովին պատկանող «Վ. Կանտակտե» սոցիալական ցանցում առկա հաշիվը:

Ե. 12.01.2015թ. Վ. Պերմյակովի կողմից իրեն ամրացված զենքով, զինվորական ծառայության վայրն ինքնակամ լքելու, բնակավայր դուրս գալու փաստը, քննության առարկա չի դարձվել, չի պարզվել այն անձանց շրջանակը թե ում անգործության կամ դիտավորյալ գործողությունների արդյունքում է Վ. Պերմյակովը զենքով ինքնակամ լքել զորամասը, չի պարզվել նույնիսկ այն անձանց շրջանակը, ովքեր պարտավոր էին վերահսկողություն իրականացնել Վ. Պերմյակովի ծառայության նկատմամբ:

Զ. 12.01.2015թ. լույս գիշերը, ժամը 02:00-ի սահմաններում, Վ. Պերմյակովի զինվորական ծառայության վայրը, զինված լքելու վերաբերյալ ՌԴ 102-րդ ռազմաբազայի հրամանատարությունը շուրջ 4 ժամ անց է ՀՀ ոստիկանությանը տեղեկացրել, որի արդյունքում ժամանակին չեն ձեռնարկվել անհրաժեշտ միջոցառումներ Վ. Պերմյակովին հայտնաբերելու ուղղությամբ: Վկայակոչված փաստի կապակցությամբ քննության առարկա չի դարձվել այն անձանց պատասխանատվության հարցը, ովքեր պարտավոր էին Վ. Պերմյակովի փախուստի մասին տեղեկացնել ՀՀ իրավապահներին:

<u>2.4.Հայաստանի Հանրապետության կողմից կատարված քննությունը չի հանգեցրել մեղավորների բացահայտմանը, ավելին՝ արվել է հնարավոր ամեն ինչ որպեսզի խոչընդոտվի կատարվելիք քննությունը.</u>

Ա. ՌԴ քննչական կոմիտեի կողմից ՀՀ քննչական կոմիտե է ներկայացվել իր վարույթում քննվող քրեական գործի նյութերի այն մասը, որը վերաբերվում է Ավետիսյանների ընտանիքի անդամների սպանության փաստով կատարված քննությանը, իսկ Վ. Պերմյակովի կողմից զորամասը զենքով ինքնակամ լքելու փաստի առթիվ հարուցված քրեական գործի շրջանակներում ձեռք բերված նյութերը ՀՀ քննչական կոմիտե չի ներկայացվել, որն անմիջականորեն կապված է տուժողի իրավահաջորդի ընտանիքի անդամների սպանության գործի հետ:

Բ. Կատարված հանցագործության համար մեղադրանք է առաջադրվել միայն Վ. Պերմյակովին, որն էլ «նախաքննությամբ» հիմնավորվել է նրանով, որ դեպքի վայրից

հայտնաբերվել է Պերմյակովի զենքը, զինվորական համազգեստը, երկու ծխախոտի գլանակ, և վերջինս ինքնախոստովանական ցուցմունքներ է տվել: Քննություն չի կատարվել այն ուղղությամբ, թե հնարավոր էր արդյոք Պերմյակովի զենքը և հագուստը գողանալու արդյունքում անհայտ անձի/անձանց կողմից կատարված լիներ ոճրագործությունը, կամ այն հանգամանքը, որ արդյոք Պերմյակովը **չի գործել մենակ**՝ սպանելով Ավետիսյանների ընտանիքի 7 անդամներին:

Գ. Վ. Պերմյակովից առգրավված բանակային նմուշի ձմեռային ներքնազգեստ շապիկի վրա հայտնաբերվել է մարդու այրան թույլ հագեցված մանր բծեր՝ 1-4 օբյեկտներ, որի թիվ 1 և թիվ 4 օբյեկտից ստացվել է գենետիկական պրոֆիլ, տվյալ գենետիկական պրոֆիլը պատկանում են մեկ մարդու, որով բացառվել է տվյալ պրոֆիլի առաջացումը Պերմյակովից: Վկայակոչված պրոֆիլների համապատասխանությունը Ավետիսյանների ընտանիքի անդամների հետ նույնպես բացառվել է: Պերմյակովից առգրավված կանաչ գույնի զինվորական նմուշի սվիտերի վրա հայտնաբերվել է մարդու մազ, որը Պերմյակովին և Ավետիսյանների ընտանիքի բոլոր անդամների պատկանելիությունը բացառվել է:

Վկայակոչված փաստերը հիմք են տալիս ենթադրելու, որ Պերմյակովը որոշ ժամանակ գտնվել է ներքնաշորերով և անհայտ անձի արյունը և մազը նրա ներքնաշորերին և սվիտերին կարող էին պայքարի արդյունքում հայտնվել:

Ավելին, Պերմյակովից առգրավված զինվորական նմուշի ամառային վարտիքի վրա հայտնաբերվել է մարդու արյան հետքեր: Արյան խմբային պատկանելիությունը չի որոշվել օբյեկտում արյան քիչ քանակության և հետագա մոլեկուլյար-գենետիկական հետազոտության անհրաժեշտության կապակցությամբ:

Դ. Ըստ գործի նյութերի՝ Պերմյակովը հանցագործությունը կատարելուց հետո թաքնվել է Հայաստանի և Թուրքիայի սահմանին գտնվող տնակում, որտեղից զանգահարել է ինչ-որ մի տաքսիստի և պատվիրել շաուրմա և կոլա ու տվյալ տնակում գտնվել է մոտավորապես 12-20 ժամ: Կատարված քննությամբ չի հայտնաբերվել որևիցե առարկա, իր, ծխախոտի գլանակ, որը կապացուցեր Պերմյակովի՝ տվյալ տնակում գտնվելու հանգամանքը:

Ե. Թիվ 18100115 քրեական գործի շրջանակներում Պերմյակովի կողմից տրված ցուցմունքները մեկը մյուսի հետ գտնվում են հակասության մեջ:

Թե՛ զինվորական ծառայությունը լքելու և Ավետիսյանների բնակարան հասնելու հանգամանքը, թե՛ Ավետիսյանների ընտանիքի անդամների սպանության հանգամանքը և թե՛ Ավետիսյանների բնակարանից մինչ Հայաստանի և Թուրքիայի սահմանը հասնելու և ձերբակալվելու պահը տրված ցուցմունքները հակասում են մեկը մյուսին: Պերմյակովի կողմից տրված ցուցմունքների հակասությունը մեր դիտարկմամբ նպատակ են հետապնդել ամեն գնով հիմնավորել Վ.Պերմյակովի մեղքը, ոչ թե բացահայտել իրականությունը: Պերմյակովը 2015թ. հունվարի 13-ից մինչ օրս գտնվում է ՌԴ 102-րդ ռազմաբազայի տարածքում, որն իր պահման պայմաններով չի կարող համապատասխանել քրեակատարողական հիմնարկի չափանիշներին և հետևաբար

Եվրոպական կոնվենցիայի 5-րդ և 3-ր հոդվածների ակնհայտ խախտում է: Ավելին, Պերմյակովը գտնվելով 102-րդ ռազմաբազայում նրա նկատմամբ հսկողություն են իրականացնում նաև այն անձինք, որոնց հավանական «հանցավոր» գործողությունների վերաբերյալ տեղեկատվություն է տիրապետում նաև Պերմյակովը և իրար հակասող և այնուհետև փորձաքննությունների եզրակացություններին համապատասխանեցված ցուցմունքները հետևանք են նրա, որ Պերմյակովը գտնվում է 102-րդ ռազմաբազայի տարածքում:

2.5. Մարդու իրավունքների եվրոպական Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի՝ «օրենքի հիման վրա ստեղծված» արտահայտությունը վերաբերում է ոչ միայն գոյություն ունեցող բազմաթիվ դատարանների իրավական հիմքերին, այլ նաև՝ յուրաքանչյուր գործով դատարանի իրավասությանը:

Սույն գործով մեղադրական եզրակացությունը ուղարկվել է ՀՀ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարան, գործի դատաքննությունը իրականացվել **արտագնա դատական նիստով՝** դաշտային փոստ 04436 զորամասում:

Դատարանի ՝ դաշտային փոստ 04436 զորամասում արտագնա նիստ անցկացնելու որոշման **պատճառաբանությունը կայանում էր բացառապես նրանում, որ Վ. Պերմյակովը** պատիժը կրում է դաշտային փոստ 04436 զորամասի կայազորային **կալանատանը և** արտագնա դատական նիստի անցկացումը բխում է արդարադատության արդյունավետության շահերից և անձի **արդար դատաքննության իրավունքի** արդյունավետ իրացման երաշխիք է ստեղծում»:

Կոնվեցիայի 6-րդ հոդվածի իմաստով գործը քննած առաջին ատյանի դատարանը օրենքի հիման վրա ստեղծված դատարան չէր քանի, որ այս պարագայում Մարդու իրավունքների եվրոպական կոնվեցիայի 6-րդ հոդվածում ամրագրված՝ արդար դատաքննության իրավունքի խախտում նույնիսկ առերևույթ առկա չէ:

2.6. Վիճարկվող դատական ակտում տեղ են գտել օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցներ այն է՝ 2015թ. հուլիսի 18-ին նախաքննություն իրականացնող մարմինը կայացրել է, որոշում ՌԴ քննչական կոմիտեի թիվ 14/00/0018-15 գործի նյութերը սույն գործով ՀՀ քննչական կոմիտեում հարուցված քրեական գործի վարույթում գտնվող գործի նյութերին միացնելու մասին, որին ի հիմնավորում վկայակոչվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդվածի 1-ին մասը և 55-րդ հոդվածի 2-րդ մասը:

ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հիմնական իրավունքների խախտմամբ ձեռք բերված կամ արդար դատաքննության իրավունքը խաթարող ապացույցի օգտագործումն արգելվում է:

Այսպիսով, ապացույցների հավաքմանը և ստուգմանն ուղղված դատավարական գործողությունների կատարման ընթացքում պետք է ապահովվի անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը: Հակառակ դեպքում կատարված դատավարական գործողության արդյունքում ստացված փաստական տվյալը, անկախ

գործի համար ունեցած նշանակությունից, կորցնում է իր իրավական ուժը, ապացուցողական նշանակությունը և չի կարող ընդգրկվել կոնկրետ քրեական գործով ապացույցների համակցության մեջ և դրվել մեղադրանքի հիմքում» (տե՛ս Արմեն Սարգսյանի վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի 2009 թվականի սեպտեմբերի 16-ի թիվ ԵՔՐԴ/0295/01/08 որոշման 15-րդ կետը):

ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը չի նախատեսում այլ պետության քննչական մարմինների կողմից իրականացված նախաքննության նյութերը, որպես ապացույց կցելու և գնահատելու կարգ, իսկ 18 հուլիսի 2015թ. քննիչի որոշմամբ վկայակոչված քրեական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդվածի 1-ին և 55-րդ հոդվածի 2-րդ մասը հիմք չեն տալիս նման գործողություն կատարելու համար:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 28-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քննիչի, դատախազի կամ դատարանի կողմից մեկ վարույթում կարող են միացվել մեկ կամ մի քանի հանցագործությունների կատարմանը մասնակցելու մեջ մեղադրվող մի քանի անձանց գործերը կամ մի անձի կողմից կատարված մի քանի հանցագործությունների վերաբերյալ գործերը:

Նույն օրենսգրքի 55-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ քննիչը լիազորված է հանցագործության դեպքով նախապատրաստել նյութեր և հարուցել քրեական գործ և սույն օրենսգրքով սահմանված ենթակայության կանոններին համապատասխան գործն ընդունել իր վարույթ կամ քննության համար ուղարկել այլ քննիչի, իր վարույթում եղած գործի քննության ընթացքում հարուցել քրեական գործ, եթե հայտնաբերվել է նոր հանցագործության դեպք, որը կատարել է այլ անձ: Քննիչը նաև իրավասու է սույն օրենսգրքի դրույթներին համապատասխան մերժել քրեական գործ հարուցելը (…):

Նշված նորմերի իրավական մեկնաբանությունը թույլ է տալիս պնդելու, որ մեկ վարույթում կարող են միացվել մեկ կամ մի քանի հանցագործությունների կատարմանը մասնակցելու մեջ մեղադրվող մի քանի անձանց գործերը կամ մի անձի կողմից կատարված մի քանի հանցագործությունների վերաբերյալ գործերը: Տվյալ դեպքում Վ. Պերմյակովի կողմից Ավետիսյանների ընտանիքի անդամների սպանության փաստի վերաբերյալ ՀՀ քննչական կոմիտեի կողմից հարուցվել է քրեական գործ, որի քննությունը իրականացվել է ՀՀ քննչական կոմիտեի քննիչ Աղաբաբյանի կողմից:

Վ. Պերմյակովի կողմից կատարված այլ հանցագործության փաստով մեկ այլ քրեական գործ ՀՀ քննչական կոմիտեի կամ ՀՀ քննչական մեկ այլ մարմնի կողմից չի քննվել կամ քննություն չի իրականացվել:

Բացակայում է նաև որևէ այլ իրավական ակտ, որը կվկայի Վ. Պերմյակովի կողմից տարբեր հանցագործությունների կատարման փաստի վերաբերյալ ՀՀ քննչական մարմինների կողմից իրականացված քննությունների մասին:

Վ. Պերմյակովի կողմից Ավետիսյանների ընտանիքի սպանության փաստի կապակցության քրեական գործ է հարուցվել նաև ՌԴ քննչական կոմիտեի կողմից, որի իրավունքը ՌԴ քննչական կոմիտեն չուներ, ըստ ՌԴ և ՀՀ-ի միջև 1997թ. օգոստոսի 29-ին կնքված ՀՀ տարածքում ռուսաստանյան ռազմակայանի գտնվելու հետ կապած իրավազորության և փոխադարձ օգնության հարցերով համաձայնագրի 4-րդ հոդվածի: Այսինք, նույն հանցագործության համար 2 տարբեր երկրների քննչական կոմիտեների

կողմից հարուցվել և իրականացման քրեական գործ, նույն փաստով և նույն անձի նկատմամբ:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով նույն անձի դեմ, տարբեր քննչական մարմինների կողմից չի կարող իրականացվել քրեական հետապնդում, նույն արարքի համար:

Սույն դեպքում, ՀՀ քննչական կոմիտեի կողմից իր վարույթում քննվող թիվ 18100118 քրեական գործին առանց որևէ իրավական հիմք միացվել է ՌԴ քննչական կոմիտեի կողմից նույն փաստով իրականացված նախաքննության նյութերը, որը Դատարանի կողմից ընդունվել է որպես ապացույց և այնուհետև տեղ գտել կայացված դատական ակտում:

2.7. Կատարված քննությունը չի հանգեցրել մեղավորների բացահայտմանը և չի պետության կողմից չի կատարվել արդյունավետ և բազմակողմանի քննություն.

Ա. Չի կատարվել՝ ՀՀ, Գյումրի քաղաքի Մյասնիկյան փողոցի 188 բնակարանում քննչական փորձարարություն՝ պարզելու համար այն հանգամանքը, թե կատարված հանցագործության (սպանություն) ժամանակ զենքի, մահացածների և մեղադրյալի փոխդասավորվածությունը, ինչպես նաև Վ. Պերմյակովի գործողությունները ստուգելու և հստակեցնելու նպատակով :

Բ. Չի Կատարվել՝ ՀՀ, Գյումրի քաղաքի Մյասնիկյան փողոցի 188 բնակարանում քննչական փորձարարություն, պարզելու համար այն հանգամանքը, թե ԱԿՍ-74 տեսակի ինքնաձիգից կրակոց արձակելու դեպքում, որքան հեռավորության վրա հնարավոր կլիներ լսել կրակոցի ձայները և ինչ ուժգնությամբ:

Գ. Ավետիսյանների ընտանիքին պատկանող բնակարանը գտնվում է Գյումրի քաղաքի Մյասնիկյան փողոցի 188-րդ հասցեում, իսկ անմիջապես հարակից տունը թիվ 190-ն է, դիմացինը՝ 203-րդ, Լ. Մադոյան փողոցի 223-րդ և 227-րդ հասցեներում գտնվող բնակարանները գտնվում են Ավետիսյաններին պատկանող բնակարանի հետևի մասում՝սույն գործի շրջանակներում վկայակոչված բնակարանների բնակիչները չեն հարցաքննվել այն դեպքում, երբ նրանց կարող է հայտնի լիներ տեղեկություններ, որոնք սույն քրեական գործի ելքի համար կարող էին էական նշանակություն ունենալ, որի ապահովելու վերաբերյալ ներկայացված միջնորդությունը դատարանի կողմից մերժվել է:

Դ. Պետության կողմից կատարված քննության շրջանակներում, բացի Վ. Պերմյակովի կողմից ներկայացված «ջուր խմելու և գողության կատարելու պատրվակով կատարված սպանության» վարկածը որևիցե այլ ուղղությամբ քննություն չի կատարվել.

Տուժողի համար չփարատված են մնացել բազմաթիվ հարցադրումներ և վարկածներ, որոնցից մեկը կայանում է նրանում, որ Մյասնիկյան փողոցում առկա 178-րդ տուն բնակիչներից մեկը նախկինում աշխատել է թիվ 102-րդ ռազմաբազայում և

տեղեկություններ են ստացվել այն մասին, որ տվյալ անձը բարձր տոկոսներով գումար է տվել նույն ռազմաբազայի սպաների, որն էլ հավանական մեկ վարկածն էր, որ հանցագործություն կատարողները կարող է շփոթած լինեին 178-րդ տունը 188-րդ տան հետ, սակայն որևիցե քննություն տվյալ ուղղությամբ չի կատարվել:

Հաշվի առնելով վերոգրյալը, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376-394-րդ հոդվածների դրույթներով՝

խնդրում ենք

Բեկանել ՀՀ Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 23.08.2016թ. դատավճիռը և գործն ուղարկել համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության:

Կից ներկայացվում է. սույն վերաքննիչ բողոքը դատական ակտ կայացրած դատարան ուղարկելը հավաստող ապացույց:

Վերաքննիչ բողոքաբերներ՝ տուժողի օրինական ներկայացուցիչներ

Արթուր Սաքունց

Արայիկ Զալյան

19.09.2016թ.